ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 25.01.2018թ.

# Մ Ի Ջ Ա Ն Կ Յ Ա Լ  Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի**

**թիվ ՍՑ-ԱՄ-2017/59**

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը հիմք ընդունելով Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի հայցի ապահովում կիրառելու մասին 25.10.2017թ. թիվ ԵԱՔԴ 4048/02/2017 որոշումը, ինչպես նաև հաշվի առնելով ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ Զեյթուն բաժնի կողմից թիվ 03744287 կատարողական վարույթ հարուցելու մասին 27.10.2017թ. որոշումը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 99-րդ հոդվածի պահանջով՝

## Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 20.09.2017թ. թիվ 03/26-3/16968-17 գրությամբ «Տիաս» ՓԲԸ-ին (ՀՎՀՀ՝ 90032661) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԱՄ-2017/59 պաշտոնական ընթացակարգը կասեցնել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ